**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5**
**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան «11-ը» ապրիլի 2018թ.
ժամը 11:20

Մասնակցում էին՝

*Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝*

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի խորհրդական Կ. Հակոբյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՁԲՖԿ ծառայության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բադալյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1.1 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մի շարք մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ և առկա է ներկայացված փաստաթղթերը լրացուցիչ ուսումնասիրելու անհրաժեշտություն՝ հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել **17.04.2018թ., ժամը 11:00-ին:**

**17.04.2018թ., ժամը 11:00-ին** կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.

«Լուսալ» ՍՊԸ-ի կողմից 20-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին (ներկայացված է այլ ապրանքատեսակի տեխնիկական բնութագիր).

- «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել ընթացակարգի հրավերի N 6.1 հավելվածով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, բացի այդ, բացակայում է ներկայացված՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը (N 6 հավելված) էլեկտրոնային եղանակով ստորագրված անձի նման իրավասությունը հավաստող լիազորագիրը,

- «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 55-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին, մասնավորապես, ընթացակարգի հրավերով պահանջվում է, որ աստիճանի բարձրությունը մինչև հարթակ պետք լինի 1300մմ, իսկ մասնակցի առաջարկում այդ բարձրությունը 145սմ է, բացի այդ, մասնակցի առաջարկում բացակայում է դրույթն առ այն, որ աստիճանը ***երկկողանի բացովի*** է, ինչը ևս ընթացակարգի հրավերի պահանջ է,

- «Դյուրլանգ» ՍՊԸ-ի կողմից 23-րդ և 24-րդ չափաբաժինների մասով ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին, մասնավորապես, 23-րդ չափաբաժնի մասով «Դյուրլանգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված N 6.1 հավելվածի տեխնիկական բնութագիր դաշտում բացակայում է ընթացակարգի հրավերով պահանջվող հետևյալ պարբերությունը. ***«չոր, էլեկտրոդի որակական հատկանիշ՝ կպչողականությունը և այրումը պետք է լինի պրեմիում դասի, փաթեթի վրա նշված լինի արտադրման ժամկետ և առնվազն մնացորդային 1 տարվա պահպանման երաշխիքային ժամկետով»***, իսկ 24-րդ չափաբաժնի մասով բացակայում է հրավերով պահանջվող հետևյալ պարբերությունը. ***«չոր, էլեկտրոդի որակական հատկանիշ՝ կպչողականությունը և այրումը պետք է լինի Ա դասի, փաթեթի վրա նշված լինի արտադրման ժամկետ և առնվազն մնացորդային 1 տարվա պահպանման երաշխիքային ժամկետով»***,

- «Արմեն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել ընթացակարգի հրավերի N 6.1 հավելվածով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (N 6 հավելվածին կից ներկայացվել է գնային առաջարկը),

- Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից 93-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին, մասնավորապես, Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից ներկայացված N 6.1 հավելվածի տեխնիկական բնութագիր դաշտում բացակայում է ընթացակարգի հրավերով

պահանջվող հետևյալ պարբերությունը. ***«պարայի վրա նշված լինի արտադրման ժամկետը և հանձնելու պահին մնացորդային առնվազն 1 տարվա պիտանելիության ժամկետ: Յուրաքանչյուր խմբաքանակի հետ ներկայացնել համապատասխանության սերտիֆիկատ և որակի անձնագիր»,***

- **«Ֆոտոն»** ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ ընթացակարգի հրավերի N 6.1 հավելվածով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը 4-րդ, 5-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ և 42-րդ չափաբաժինների մասով չի համապատասխանում ընթացակարգի հրավերի պահանջներին, մասնավորապես, նշված չափաբաժինների մասով N 6.1 հավելվածի **«արտադրողը»** դաշտում լրացված է **«ՀՀ շուկա»** արտահայտությունը, տվյալ դաշտում անհրաժեշտ է հստակ նշել առաջարկվող ապրանքատեսակները արտադրողի անվանումը,

- «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ ընթացակարգի հրավերի N 6.1 հավելվածով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը 69-րդ չափաբաժնի մասով չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես, «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել ընթացակարգի հրավերի 69-րդ չափաբաժնով նախատեսված **«Կոյուղու խողովակներ (Կոյուղու խողովակ Ф-110*3.2*3000)»** ապրանքատեսակի մասով, որի փոխարեն սակայն N 6.1 հավելվածով ներկայացված է **«Կավիճ, աղացած (Կավիճ)»** ապրանքատեսակի տեխնիկական բնութագիրը,

- «Մեհրաբյան և որդիներ» ՍՊԸ-ի կողմից 85-րդ, 86-րդ, 87-րդ, 88-րդ, 91-րդ, 94-րդ, 95-րդ և 96-րդ չափաբաժինների մասով ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին, մասնավորապես.

***85-րդ չափաբաժին.*** Նշված չէ, որ ներկը պետք է լինի ***փայլով***: Բացակայում է հրավերով պահանջվող հավաստումն առ այն, որ «յուրաքանչյուր խմբաքանակի հետ պետք է ներկայացվի համապատասխանության սերտիֆիկատ և որակի անձնագիր»,

***86-րդ չափաբաժին.*** Նշված չէ, որ ներկը պետք է լինի ***փայլով***: Բացակայում է հրավերով պահանջվող հավաստումն առ այն, որ «յուրաքանչյուր խմբաքանակի հետ պետք է ներկայացվի համապատասխանության սերտիֆիկատ և որակի անձնագիր»,

***87-րդ չափաբաժին.*** Նշված չէ փաթեթավորման **ԳՕՍՏ**-ը: Ընթացակարգի հրավերով պահանջվում է, որ ներկերը պետք է մատակարարվեն **5 և 20 կգ**-ոց մետաղական տարաներով, իսկ մասնակցի առաջարկում դրանք նախատեսվում է մատակարարել **2.8 և 25 կգ**-ոց մետաղական տարաներով: Բացակայում է հրավերով պահանջվող հավաստումն առ այն, որ «յուրաքանչյուր խմբաքանակի հետ պետք է ներկայացվի համապատասխանության սերտիֆիկատ և որակի անձնագիր»,

***88-րդ չափաբաժին.*** Նշված չէ, որ ներկը պետք է լինի ***փայլով***: Բացակայում է հրավերով պահանջվող հավաստումն առ այն, որ «յուրաքանչյուր խմբաքանակի հետ պետք է ներկայացվի համապատասխանության սերտիֆիկատ և որակի անձնագիր»,

***91-րդ չափաբաժին.*** մակնշման և փաթեթավորման համար նշված 10503-71 ԳՕՍՏ-ը չի համապատասխանում հրավերով սահմանված մակնշման և փաթեթավորման ԳՕՍՏ-ով սահմանված պայմաններին: Ընթացակարգի հրավերով պահանջվում է, որ ներկերը պետք է մատակարարվեն **4-20 կգ**-ոց տարաներով, իսկ մասնակցի առաջարկում դրանք նախատեսվում է մատակարարել **2.8-25 կգ**-ոց մետաղական տարաներով: Բացակայում է հրավերով պահանջվող հավաստումն առ այն, որ «յուրաքանչյուր խմբաքանակի հետ պետք է ներկայացվի համապատասխանության սերտիֆիկատ և որակի անձնագիր»,

***94-րդ չափաբաժին.*** Նշված չէ, որ ներկը պետք է լինի ***փայլով***: Բացակայում է հրավերով պահանջվող հավաստումն առ այն, որ «յուրաքանչյուր խմբաքանակի հետ պետք է ներկայացվի համապատասխանության սերտիֆիկատ և որակի անձնագիր»,

***95-րդ չափաբաժին.*** Նշված չէ, որ ներկը պետք է լինի ***փայլով***: Բացակայում է հրավերով պահանջվող հավաստումն առ այն, որ «յուրաքանչյուր խմբաքանակի հետ պետք է ներկայացվի համապատասխանության սերտիֆիկատ և որակի անձնագիր»,

***96-րդ չափաբաժին.*** Նշված չէ, որ ներկը պետք է լինի ***փայլով***: Բացակայում է հրավերով պահանջվող հավաստումն առ այն, որ «յուրաքանչյուր խմբաքանակի հետ պետք է ներկայացվի համապատասխանության սերտիֆիկատ և որակի անձնագիր»,

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել վերը նշված մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունները, իսկ նիստը շարունակել մասնակիցների կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում:

*ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն 1-ին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, բացառությամբ «Սատուրն Գրին» ՍՊԸ-ի, որն, ըստ ներկայացված տվյալների, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 12151 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ և որը գերազանցում է մասնակցի գնային առաջարկի մեկ տոկոսը:* Գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել **«Սատուրն Գրին»** ՍՊԸ-ի հայտը և հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետի պահանջները, որոշեց վերջինիս տվյալները ուղարկել լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն երեք աշխատանքային օրվա ընթացքում չներկայացնեն լրացուցիչ տվյալներ:

Քանի որ «Սատուրն Գրին» ՍՊԸ-ի մերժման արդյունքում ընթացակարգի 37-րդ և 38-րդ չափաբաժինների մասով մնացած մասնակիցների առաջարկված գները գերազանցում են պատվիրատուի՝ տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնահատող հանձնաժողով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի պահանջները, որոշեց գների նվազեցման նպատակով 20.04.2018թ. ժամը 15:00-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2018թ. ապրիլի 20-ին, ժամը 15:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Կ. Հակոբյան |
| Գնահատող | Ա. Պապյան |
| Գնահատող | Հ. Բաղալյան |
| Գնահատող | Ա. Մաղաքյան |
| Գնումները համակարգող՝ | Ռ. Մարդոյան |

17.04.18թ.

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6**
**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան «20-ը» ապրիլի 2018թ.
ժամը $15^{00}$

Մասնակցում էին՝
**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի խորհրդական Կ. Հակոբյան,
**գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՁԲՖԿ ծառայության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բադալյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթերի քննարկման, բանակցությունների անցկացման և ընտրված մասնակիցներին որոշման մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթերի քննարկման, բանակցությունների անցկացման և ընտրված մասնակիցներին որոշման մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1.1 Քննարկելով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթերը՝ հանձնաժողովը դրանք գնահատեց հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.

- «Լուսալ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով առկա անհամապատասխանությունները չշտկվեցին (պահանջվող փաստաթղթերը ներկայացվեցին մեկ օր ուշացումով՝ 19.04.2018թ., ընդ որում մասնակիցը գրավոր տեղեկացրեց, որ ուշ ուղարկելը տեխնիկական թյուրիմացության պատճառով է),
- **«Մեծ Ծիածան»** ՍՊԸ-ի կողմից որպես շտկված տարբերակ ներկայացված ընթացակարգի հրավերի N 6.1 հավելվածով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը 69-րդ չափաբաժնի մասով դարձյալ չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես, «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել ընթացակարգի հրավերի 69-րդ չափաբաժնով նախատեսված **«Կոյուղու խողովակներ (Կոյուղու խողովակ Փ-110*3.2*3000)»** ապրանքատեսակի մասով, որի փոխարեն սակայն N 6.1 հավելվածով ներկայացված է **«Կոյուղու խողովակներ (Կոյուղու խողովակ Փ-110*3.2*1000)»** ապրանքատեսակի տեխնիկական բնութագիրը,

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդկետի 2-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց 20-րդ չափաբաժնի մասով մերժել «Լուսալ» ՍՊԸ-ի, իսկ 69-րդ չափաբաժնի մասով՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի հայտերը:

1.2 Քանի որ «Լուսալ» և «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ների մերժման արդյունքում ընթացակարգի 20-րդ և 69-րդ չափաբաժինների մասով մնացած մասնակիցների առաջարկված գները գերազանցում են պատվիրատուի՝ տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնահատող հանձնաժողով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի պահանջները, որոշեց գների նվազեցման նպատակով 02.05.2018թ. ժամը 11:40-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ և նիստը շարունակել տվյալ ժամկետին:

1.3 Քանի որ «Սատուրն Գրին» ՍՊԸ-ի մերժման արդյունքում 20.04.2018թ. ժամը 15:00-ին նշանակված բանակցությունների որևէ մասնակից չներկայացավ, առաջարկված գները թողնվեցին առանց փոփոխության: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին) հանձնաժողովը որոշեց 37-րդ և 38-րդ չափաբաժինների մասով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:

1.4 Հանձնաժողովն արձանագրեց, որ «Սատուրն գրին» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են լրացուցիչ տվյալներ՝ ժամկետանց հարկային պարտավորությունների բացակայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2018թ. մայիսի 2-ին, ժամը 11:40-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Կ. Հակոբյան |
| Գնահատող | Ա. Պապյան |
| Գնահատող | Հ. Բաղալյան |
| Գնահատող | Ա. Մաղաքյան |
| Գնումները համակարգող՝ | Ռ. Մարդոյան |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7**
**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան «02-ը» մայիսի 2018թ.
ժամը 11[40]

Մասնակցում էին՝
**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի խորհրդական Կ. Հակոբյան,
**գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՁԲՖԿ ծառայության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բադալյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում բանակցությունների անցկացման և ընտրված մասնակիցներին որոշման մասին մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում բանակցությունների անցկացման և ընտրված մասնակիցներին որոշման մասին մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1.1 Բանակցությունների արդյունքում «Ֆոտոն» ՍՊԸ-ն համաձայնվեց 20-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկը նվազեցնել 494,000 (չորս հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամի (ներառյալ ԱԱՀ): 69-րդ չափաբաժնի մասով առաջարկված գները չնվազեցվեցին և դրանք թողնվեցին առանց փոփոխության: 20-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Ֆոտոն» ՍՊԸ-ն: Հանձնաժողովը որոշեց «Ֆոտոն» ՍՊԸ-ին առաջարկել ներկայացնելու 20-րդ չափաբաժնի մասով «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:
Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին) հանձնաժողովը որոշեց 69-րդ չափաբաժնի մասով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:
**03.05.2018թ. «Ֆոտոն» ՍՊԸ**-ի կողմից ներկայացվեցին պահանջվող փաստաթղթերը, որոնք հանձնաժողովի կողմից գնահատվեցին հրավերի պահանջներին համապատասխան:
1.3 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցների որակավորման հատկանիշները և ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջինիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակիցներ այն չափաբաժիններում, որտեղ վերջիններս ճանաչվել էին 1-ին տեղ զբաղեցնող և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:
1.4 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**Գնահատող(ԳԱՊ)** Կ. Հակոբյան

**Գնահատող** Ա. Պապյան

**Գնահատող** Հ. Բադալյան

**Գնահատող** Ա. Մաղաքյան

**Գնումները համակարգող՝** Ռ. Մարդոյան

**03.05.18թ**